ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2016 թվականի **թիվ 12** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտներում պաշտոնատար անձանց պաշտոնները համալրելու համար թեկնածուների ընտրության հարցերով մրցութային հանձնաժողովի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 9-րդ հոդվածին եւ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 54-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 99 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտներում պաշտոնատար անձանց պաշտոնները

համալրելու համար թեկնածուների ընտրության հարցերով մրցութային հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 14-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«14. Անցկացված մրցույթի արդյունքների մասին որոշումն ընդունվում է ԵՏՀ–ի մրցութային հանձնաժողովի անդամների կողմից՝ Կոլեգիայի նախագահին առաջարկության ձեւով: Նշված որոշումն ընդունվում է փակ քվեարկությամբ՝ ԵՏՀ–ի մրցութային հանձնաժողովի՝ նիստին ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ: Փակ քվեարկության կազմակերպման պարտականությունը դրվում է ԵՏՀ–ի մրցութային հանձնաժողովի քարտուղարի վրա: Փակ քվեարկության անցկացման կարգը հաստատվում է Կոլեգիայի նախագահի հրամանով:»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**